ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՋՆԻՒ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի սիրելի զաւակիդ:

Սիրելի Տիկին Գասպարեան, հոգու առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում հայ երգարուեստի զարգացմանը շնորհաշատ հայուհուդ բերած հարուստ ու պերճախօս աւանդին: Տասնամեակներ շարունակ Դուք Երեւանի մայր բեմից մեր ժողովրդին էք մատուցել Ձեր բարձր ու գեղեցիկ արուեստը՝ երաժշտասէր հասարակայնութեանը հիացնելով Աստուածպարգեւ Ձեր ձայնով ու կատարողական բարձր վարպետութեամբ: Ձեր անունը թանկ ու սիրելի է մեր ժողովրդի զաւակների համար եւ այսօր էլ, տարիներ անց, հայրդեաց յիշողութեան մէջ անջնջելիօրէն տպաւորուած են Անուշի, Օլիմպիայի, Գոհարի, Մարգարիտի, Մանոնի եւ բազմաթիւ այլ դերերում Ձեր անկրկնելի կատարումները:

Դուք նուաճել էք նաեւ աշխարհի բազում հռչակաւոր բեմահարթակներ եւ հայ ու համաշխարհային երաժշտութեան գոհարների բարձրարուեստ կատարումներով հմայել օտարազգի հանդիսատեսներին: Ձեր գործունէութիւնը գնահատուած է միջազգային ամենաբարձր մակարդակներով՝ մեծ ճանաչում ու պատիւ բերելով Ձեզ նաեւ Հայրենիքից դուրս:

Ուրախ ենք հաստատել, որ Ձեր երգացանկում յատուկ տեղ են գրաւել հայ հոգեւոր երաժշտութեան գանձերը, որոնք Դուք սովորել էք դեռեւս Ձեր ծննդավայրում, հայ կեանքի աւանդութիւններով հարուստ Եգիպտոսում՝ մանուկ հասակից երգելով եկեղեցու դպրաց դասում: Ձեր երգը հնչել է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ որպէս աղօթք ու փառաբանութիւն առ Բարձրեալն Աստուած, Ով Իր առատ օրհնութեամբ պարգեւել է Ձեզ երգչուհու փաղանդն ու շնորհները:

Երաժշտական Ձեր հմտութիւնները Դուք ամենայն սիրով ու նուիրումով բաշխել էք նաեւ բազմահարիւր երիտասարդ երգիչ-երգչուհիների՝ երկար տարիներ դասաւանդելով Երեւանի Կոմիտասի անուան Պետական Կոնսերուատորիայում: Այսօր Ձեր սաներից շատերը

շարունակում են Ձեր աւանդները եւ, ունենալով Ձեր բարի օրինակը, անխոնջ ծառայում հայ երգարուեստի զարգացմանը:

Մեծազնիւ Տիկին Գասպարեան, հայ երգարուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ թարգմանիչ մեր մեծ սրբերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած Իր ամենազօր եւ ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահի եւ պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 211

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека